ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

0010, ՀՀ, ք. Երևան, Զաբյան 7-2
Հեռ.՝ (+374 10) 600 701, 600 704
Հեռապատճեն՝ (+374 10) 600 703
Էլ-փոստ՝ info@advocates.am
Կայք՝ www.advocates.am

№ 01/03/1379-19
«30» 10 2019թ.

Հայաստանի Հանրապետության
վարչապետ՝ պարոն Նիկոլ Փաշինյանին

Հարգելի պարոն Փաշինյան,

Փաստաբաններ Հայկ Ալումյանը, Ռուբեն Սահակյանը, Արամ Օրբելյանը, Արամ Վարդևանյանը և Հովհաննես Խուդոյանը 25.10.2019 թվականին դիմել են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատին և պետական մարմիններին, ըստ էության խնդրելով միջոցներ ձեռնարկել փաստաբանի մասնագիտական գործունեությունը խոչընդոտող դեպքերը վերացնելու ուղղությամբ:

Ըստ փաստաբանների՝ Ռոբերտ Քոչարյանի հետ կապված քրեական գործով դատական նիստերի ժամանակ դատարանի շենքում և շենքի հարակից տարածքներում հավաքված անձանցից ոմանք պաշտպանների հասցեին անհարգալից, վիրավորական և սպառնալից վանկարկումներ են անում:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ «Փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին» 25.10.2000թ. №Rec(2000)21 հանձնարարականը պետություններին կոչ է անում ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի հարգվի, պաշտպանվի և խթանվի փաստաբանի մասնագիտական գործունեության ազատությունն առանց խտրականության և իշխանությունների կամ հասարակության կողմից անիրավաչափ միջամտության, հատկապես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համապատասխան դրույթների լույսի ներքո:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ֆիզիկական և իրավաբանական անձանց (ներառյալ՝ զանգվածային լրատվության միջոցների) միջամտությունը փաստաբանական գործունեությանը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք վճիռներում հատուկ ընդգծել է փաստաբանի մասնագիտության կենտրոնական դերն արդարադատության համակարգում և իրավունքի գերակայության ապահովման

գործում: Ինչպես նշել է Եվրոպական դատարանն, առանց անհարկի խոչընդոտների իրենց մասնագիտական գործունեությամբ զբաղվելու փաստաբանների ազատությունը հանդիսանում է ժողովրդավարական հասարակության էական բաղադրիչ և անհրաժեշտ նախապայման Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի պահանջների իրագործման համար[1]:

Հետևաբար՝ անվիճելի է, որ փաստաբանին՝ իր մասնագիտական գործունեությունն իրականացնելու առնչությամբ վիրավորելը և զրպարտելն ունի հանրային վտանգավորության բարձր աստիճան, քանի որ այն իր բացասական ազդեցությունն է ունենում ոչ միայն փաստաբանի անձի, այլ նաև վերջինիս կողմից իրականացվող մասնագիտական գործունեության արդյունքի վրա և հանդիսանում է վերջինիս վրա ճնշում գործադրելու և նրա մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու միջոց:

Վերոգրյալը հաշվի առնելով դեռևս 11.08.2018թ. ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը հաստատել և արդարադատության նախարարությանն էր ներկայացրել ՀՀ քրեական օրենսգրքի լրացման մասին օրենքի նախագիծ, որով առաջարկվում էր պատասխանատվություն նախատեսել փաստաբանին՝ իր մասնագիտական գործունեությունն իրականացնելու առնչությամբ վիրավորելու և զրպարտելու համար:

Առ այսօր որևէ առաջընթաց չունենք այդ խնդրի լուծման կապակցությամբ, մինչդեռ փաստաբանների նկատմամբ վիրավորական գործողությունները շարունակվում են:

Վերոգրյալը հաշվի առնելով խնդրում ենք Ձեր հանձնարարականը իրավասու մարմիններին՝ գործուն միջոցներ ձեռնարկել քաղաքացիների կողմից փաստաբաններին՝ իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելու առնչությամբ վիրավորելու և զրպարտելու վարքագիծը կանխելու կապակցությամբ:

Առդիր՝ փաստաբանների բողոքի պատճենը:

Հարգանքով՝

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ
Արա Զոհրաբյան

[1] Էլչին ու ուրիշներն ընդդեմ Թուրքիայի վճիռ, գանգատներ թիվ 23145/93 և 25091/94, կետ 669.